



## HFHS Patient Financial Assistance Program-ի քաղաքականություն (Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագիր, PFAP)

### Քաղաքականություն

Henry Ford Health System-ն (HFHS) ամեն հիվանդի վերաբերվում է արժանապատվությամբ, հարգանքով և կարեկցանքով: Հիվանդները կարող են HFHS-ին դիմել նրա մատուցած ծառայությունների դիմաց արդար գնագոյացման համար, ինչպես նաև հիվանդներին ցուցաբերած օժանդակության համար՝ օգնելու գտնել տարբերակներ՝ իրենց բժշկական ծախսերը կառավարելու համար:

Բոլոր հիվանդներն իրավունք ունեն ստանալ շտապ բժշկական օգնություն՝ անկախ հիվանդների վճար ունակությունից կամ նախորդ այցելություններից որևէ չմարված մնացորդից:

Ակնկալվում է, որ հիվանդները և/կամ երաշխավորները ցանկացած ֆինանսական պարտավորության համար պատասխանատու են HFHS-ին մատուցված բժշկական ծառայությունների համար: Պատասխանատվությունն այնպիսի գործողությունների միջոցով է ներկայացվում, ինչպիսիք են HFHS-ին ճշգրիտ և ամբողջական տեղեկությունների տրամադրումը, ժամանակին վճարումը, վճարման ժամանակացույցով համաձայնեցված համապատասխանությունը, և բժշկական ապահովագրությամբ հաշվառումը, լինի դա գործատուի կողմից տրամադրված, անհատական կամ կառավարության աջակցմամբ ծրագրեր, ինչպիսիք են՝ Medicare (Մասեր A, B և D, կամ C) և Medicaid ծրագրերը կամ որևէ այլ երրորդ կողմ հանդիսացող վճարող, ինչպես կիրառելի է:

Ծառայություն մատուցողների կողմից մասնակից կողմերի մոտ մատուցված ծառայությունները, որոնք վճարված են HFHS-ի կողմից, իրավասու են HFHS ֆինանսական աջակցություն ստանալ՝ սույն քաղաքականության համաձայն: Նման վայրերի և մատակարարների ցանկը կարելի է անվճար ձեռք բերել Henry Ford Health System վեբկայքից կամ զանգահարելով մատակարարների գրասենյակներ:

HFHS Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագիր (PFAP) նախատեսված է այնպիսի իրավիճակների համար, երբ որակավորված հիվանդը հրատապ բժշկական օգնության կարիք ունի և իրավասու չէ առողջապահական ապահովագրության կամ ապահովագրված է, սակայն սահմանափակ ֆինանսական միջոցների չափով:

### Որակավորվում է PFAP-ի համար.

HFHS PFAP-ի որակավորումը կսահմանվի անհատական հիմունքներով: Հիվանդը կարող է PFAP-ի համար որակավորվել հետևյալ երեք մեթոդներով.

#### Մեթոդ (1)

- Ամերիկայի Միացյալ Նահանգներում օրինական բնակություն:
- HFHS-ի առաջնային սպասարկման տարածքներում ունենալով անձնական բնակության վայր, ներառյալ՝ Ուեյն, Մակոմբ և Օուկլենդ վարչական շրջանները:
- Դիմել բուժման համար HFHS-ի հաստատությունում HFHS ծառայություն մատուցողի կողմից ախտորոշված բժշկական խնամքի համար:

- HFHS-ի կողմից որոշված առողջապահական ապահովագրություն ստանալու ոչ իրավասու լինելը:
- Տարեկան համախառն տնային տնտեսության եկամուտը հավասար է Դաշնային աղքատության մակարդակի 250%-ին կամ դրանից ցածր:

Հիվանդները, ովքեր համապատասխանում են PFAP-ի համար վերոհիշյալ որակավորումներին, բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունների 100% զեղչի իրավունք կունենան:

### Մեթոդ (2)

- Հիվանդներ, ովքեր 12 ամիսների ընթացքում կուտակել են մեծ բժշկական պարտք HFHS-ին՝ աղետալի իրավիճակի արդյունքում բժշկական ծառայությունների դիմաց իրենց կողմից կատարված ծախսերի հաշվին, որը գերազանցում է իրենց համախառն տարեկան տնային տնտեսության եկամուտի 30%-ը:
- Ամերիկայի Միացյալ Նահանգներում օրինական բնակություն:
- HFHS-ի առաջնային սպասարկման տարածքներում ունենալով անձնական բնակության վայր, ներառյալ՝ Ուեյն, Մակոմբ և Օուկլենդ վարչական շրջանները:
- Դիմել բուժման համար HFHS-ի հաստատությունում HFHS ծառայություն մատուցողի կողմից ախտորոշված բժշկական խնամքի համար:

Հիվանդները, ովքեր համապատասխանում են PFAP-ի համար վերոհիշյալ որակավորմանը, հետևյալ զեղչերի իրավունք կունենան.

- Այն հիվանդները, ովքեր տարեկան համախառն տնային տնտեսության եկամուտը հավասար է Դաշնային աղքատության մակարդակի 250%-ին կամ ավելի ցածր է, բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունների 100% զեղչի իրավունք կունենան:
- Այն հիվանդների համար, ում տարեկան համախառն տնային տնտեսության եկամուտը հավասար է Դաշնային աղքատության մակարդակի 250%-ին կամ ավելի բարձր է, չմարված բժշկական պարտքը կհարմարեցվի իրենց տնային տնտեսության 30%-ին:

### Մեթոդ (3)

Հավանականության սկզբունքով HFHS-ը կարող է հետ ընթացակարգով PFAP-ի համար որակավորում սահմանել:

Հիվանդները, ովքեր համապատասխանում են PFAP-ի համար հավանական որակավորումներին, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունների 100% զեղչի իրավունք կունենան:

### Դիմում՝ PFAP-ի համար.

Օժանդակության համար հայտի ներկայացումը կատարվում է HFHS-ի ֆինանսական խորհրդատվական աշխատակազմի հետ կապի միջոցով, ինչպես նաև որոշակի ֆինանսական և աջակցող տեղեկությունների տրամադրմամբ: Հիվանդները և/կամ երաշխավորները կարող են ֆինանսական օժանդակության դիմել HFHS-ի կողմից հիվանդին և/կամ երաշխավորին նախնական վճարման հաշիվ ներկայացնելուց հետո 240 օրվա ընթացքում ցանկացած ժամանակ: HFHS-ն, իր հերթին, կքննի դիմումը և կորոշի որակավորումը լրացված դիմումը ստանալուց հետո 30 օրացույցային օրվա ընթացքում: Անհատը որոշման և որոշման հիմնավորման մասին կձանուցվի գրավոր կերպով:

*Patient Financial Assistance Program-ին (Հիվանդի ֆինանսական օժանդակության ծրագիր, PFAP) մասնակցելու որակավորումը ենթակա է HFHS-ի եկամուտների ցիկլի կառավարման հաստատմանը՝ կլինիկական խնամքի թիմերի հետ գործընկերությամբ:*

*Հաշվի առնելով հատուկ հանգամանքները, կարող են կատարվել բացառություններ: Նման բացառությունները կկիրառվեն անհատական հիմունքներով: Արված ցանկացած բացառություն չի ենթադրում փոփոխություն քաղաքականության մեջ, ինչպես նաև չի երաշխավորում, որ միևնույն որոշումը կկայացվի սպազայում:*

## **Չի որակավորվում PFAP-ի համար.**

Չապահովագրված հիվանդները, ովքեր չեն համապատասխանում PFAP չափորոշիչներին, ծառայության համար կվճարեն ոչ ավելի, քան առողջության պահպանման ապահովագրական ծածկույթ ունեցող անհատներն Ընդհանուր վճարվող գումարների (AGB) չափով: Սովորաբար նման ծառայությունների համար այս ցուցանիշը կազմում է Medicare-ի սահմանված վճարման դրույքի 115%-ը:

PFAP չորակավորված հիվանդների համար HFHS-ի կողմից չվճարման համար ձեռնարկվելիք քայլերը նկարագրված են առանձին հիվանդի վճարման և հավաքագրման քաղաքականության մեջ, որը կարելի է անվճար ձեռքբերել HFHS-ի ֆինանսական խորհրդատվական անձնակազմից կամ Henry Ford Health System վեբկայքից:

## **Սահմանում(ներ)**

- **Ընդհանրապես վճարված գումարները (AGB)** նշանակում է միջին գումար, որը HFHS-ն ակնկալում է, որ ծառայության համար կվճարվի առևտրային ապահովագրողի կողմից՝ օգտագործելով միևնույն վճարային և կողավորման գործընթացը, ինչը կիրառվում է Medicare-ի սակագնի դեպքում հիվանդների սպասարկման համար.
- **Երաշխավորն** այն անձն է, ով պատասխանատու է հիվանդի վճարման համար:
- **HFHS ծառայության մատակարարն** այդ իմաստով ներառում է բոլոր վարձու մատակարարներին և անհատ մատակարարներին, որոնք հավատարմագրված են HFHS-ի սպասարկման տարածքում՝ HFHS հիվանդներին օգնություն տրամադրելու HFHS հաստատությունում, ինչպես նաև իրենց մասնավոր գրասենյակներում:
- **Տնային տնտեսության եկամուտը** ներառում է չհարկված եկամուտները, գործազրկության փոխհատուցումը, աշխատողների փոխհատուցումը, սոցիալական ապահովությունը, լրացուցիչ ապահովության եկամուտը, հասարակական աջակցությունը, վետերանների վճարները, վերապրածների նպաստները, կենսաթոշակային կամ պաշտոնաթողության եկամուտը, տոկոսագումարը, շահաբաժինները, վարձավճարները, հեղինակային իրավունքների համար արված վճարները, անշարժ գույքից ստացված եկամուտները, տրեստները, կրթական օժանդակությունը, ալիմենտը, երեխայի նպաստը, տնային տնտեսությունից դուրս օժանդակությունը և այլ տարատեսակ աղբյուրները: ՉԻ ՆԵՏԱՌՈՒՄ անկանխիկ նպաստները, ինչպիսիք են պարենային դրոշմանիշերը և բնակարանային սուբսիդիաները կամ կապիտալի ձեռքբերումները կամ կորուստները: Եթե անձն ապրում է ընտանիքի հետ, ամբողջ տնային տնտեսության ընտանիքի անդամների եկամուտները պետք է ներառվեն (այդ թվում՝ քաղաքացիական ամուսինները), քանի դեռ ընտանիքի անդամները վարձավճար են տալիս և/կամ տան տերերից անկախ չեն: Ոչ բարեկամները, օրինակ՝ տնակիցները, չպետք է ներառվեն: Կախվածության կարգավիճակը պետք է որոշվի անհատական հիմունքներով:
- **Բժշկական կարիք, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ կամ բժշկական անհրաժեշտություն** նշանակում է՝ առողջապահական խնամքի ծառայություններ, որոնք խելամիտ կլինիկական վճիռն իրականացնող բժիշկը տրամադրում է հիվանդին՝ հիվանդության կամ դրա ախտանիշների գնահատման, ախտորոշման կամ բուժման նպատակով, որոնք բժշկական պրակտիկայում համարվում են ընդունված չափանիշներ: Կանխարգելիչ կամ հետազոտման ծառայությունները փոխհատուցվում են, միայն եթե պատվիրված են HFHS ծառայության մատակարարի կողմից: